



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ  
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

N 150 - Ա

06 մայիսի 2019 թ

**ԱԼԲԵՐՏ ԱՂԵԿՅԱՆԻՆ  
Ք.ԵՐԵՎԱՆԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ ու 209-րդ հոդվածների, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի ու 19-րդ հոդվածի, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Քաղաքացիական ծառայողի ծառայողական գործուղման պայմաններն ու կարգը սահմանելու մասին» N 1239-Ն որոշումը

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի գլխավոր քարտուղարի տեղակալ Ալբերտ Աղեկյանին 2019 թվականի մայիսի 6-ից մայիսի 8-ը ներառյալ, երեք օրով գործուղել ք.Երևան՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայի կողմից անցկացվող «Էթիկայի հանձնաժողովի անդամներին անհրաժեշտ հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնին՝ սահմանված կարգով կատարել համապատասխան փաստաթղթային ձևակերպումներ:

06.05.2019



*[Handwritten signature]*

ՄԱՐԶՊԵՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԿԱՆ ԳՆԵԼ 1710830069

**Գ. ՍԱՆՈՍՅԱՆ  
Ք.Գավառ**